


ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱԸ

Ընթերցանության ժամանակ՝ 7 րոպե

Սա փողի, պարտքի, գնաճի և հարստության պահպանության մասին երեք մասից բաղկացած մեր զեկույցի երկրորդ մասն է: Առաջին մասում մենք պնդում էինք, որ չպետք է չափազանց մեծ ուշադրություն դարձնենք փողի առաջարկի (և փողի թողարկման) վիճակագրության վրա: Ինչպես ներկայացված է Գծապատկեր 1-ում՝ փողի առաջարկի և գնաճի միջև կապը խզվել էր շատ վաղուց:

Գծապատկեր 1. Բազիսային սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) և M2 փողի գնաճվածը (տարեկան փոփոխություն)




Աղբյուրը՝ FRED

Այսպիսով, ինչն է առաջացնում գնաճ ժամանակակից աշխարհում: Սա կարող է պարադոքսալ թվալ, բայց գնաճի ամենակարևոր որոշիչներից մեկը գնաճային սպասումներն են: Սա է հիմնական պատճառը, որ շատ զարգացող տնտեսություններ դժվարանում են վերահսկել գնաճը. մարդկանց գնաճային սպասումները անկայուն են, և կառավարության նկատմամբ վստահության մակարդակը շատ ցածր է: Զարգացող տնտեսություններում շատ ավելի հեշտ է բորբոքել գնաճային խուճապ: Սա առաջին կետն է, որը մենք ցանկանում էինք շեշտել:

Երկրորդ կետը՝ հասկանալ որոշակի ոլորտներում գների բարձրացման և գնաճի ընդհանուր մակարդակի տարբերությունը: Ինչպես ներկայացված է **Գծապատկեր 2-ում**՝ վերջին տասը տարիների ընթացքում տարբեր ոլորտներ ունեցել են գնաճի տարբեր մակարդակներ: Օրինակ, 2010-2020 թվականների ընթացքում ԱՄՆ - ի կրթության ոլորտում գները բարձրացել են շուրջ 40%-ով: Նույն ժամանակահատվածում կապի ոլորտում գներն ընդհանրապես չեն բարձրացել: Կարևոր է գնաճի ընդհանուր մակարդակը բոլոր ոլորտներում:

Գծապատկեր 2. ԱՄՆ ՍԳԻ - ն ըստ ոլորտների.



Աղբյուրը՝ IMF



Թարգմանություն.
Բնօրինակը
անգլերենով է




FUTURES STUDIO

Think to connect!

Օրինակ՝ պղնձի գնի 50% աճը պարզապես հարստության փոխանցում է պղնձի սպառողներից պղնձիարտադրողներ: Նույնը կարելի է ասել ցանկացած այլ բարիքի կամ ծառայության մասին՝ սկսած բնական ռեսուրսներից մինչև առողջապահություն և կրթություն: Հարստության փոխանցումը մի արդյունաբերությունից մյուսը չպետք է շփոթել համատարած գնաճի հետ: Սա երկրորդ կետն է, որը մենք ցանկանում էինք շեշտել:

Մեր երրորդ կետը 2021 թվականի գնաճի տեմպերի մասին է: Պատկերացրեք մի պլաստիկ շիշ, ջրով լի, նեղ խցանով: Եթե ձգմեք շիշն, ապա ջուրը ուժեղ դուրս կհորդա: Նույնն այժմ տեղի է ունենում որոշակի ապրանքների և ծառայությունների գների հետ՝ օգտագործված մեքենաներ, ապրանքներ՝ օրինակ պղինձ, շինանյութեր՝ օրինակ փայտ և այլն (Տե՛ս Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Սպառողական ապրանքների գներ (ֆյուչերսների գներ, փոփոխությունն նախորդ տարվա համեմատ)



Աղբյուրը՝ Yahoo Finance

Պահանջարկի կտրուկ աճը, որը զուգորդվում է խաթարված նյութատեխնիկական ապահովման հետ, միաժամանակ ստեղծել են նեղ խցանի և ձգմելու էֆեկտը: Առաջարկը միշտ շարժվում է ավելի դանդաղ, քան պահանջարկը: Երբ առաջարկը հավասարվի պահանջարկին, գները կկայունանան: Միակ հարցն այն է՝ արդյո՞ք դա կհանգեցնի տարածված գնաճի բոլոր ոլորտներում: Մենք այդպես չենք կարծում, և շուկան համաձայն է մեզ հետ: ԱՄՆ 10-ամյա պետական պարտատոմսերը կայուն են 2021 թվականի մարտի կեսերից՝ մոտ 1.65%: Սա նշանակում է, որ շուկան չի անհանգստանում համատարած գնաճով:

Ավելին, բոլոր զարգացած երկրներում, առանց որևէ բացառության, գնաճի տեմպերը և գնաճային սպասումները լավ են վերահսկվում: **Աղյուսակ 1-ում** ներկայացված հիսուն տնտեսությունները կազմում են համաշխարհային տնտեսության ավելի քան 90%-ը: Այս հիսուն երկրներից միայն հինգում է, որ տարեկան գնաճը գերազանցում է 10%-ը: Այս հինգ երկրներում էլ կառավարության և նրա ինստիտուտների նկատմամբ վստահության մակարդակը մոտ է զրոյի: (Տե՛ս «**Վստահության աղճեք**»-ի մասին մեր վերջին գեկույցը, որը հասանելի է մեր կայքում):

Աղյուսակ 1.50 խոշոր տնտեսությունների (ըստ ՀՆԱ-ի) գնաճի տեմպերը

Երկրներ	ՀՆԱ (% համաշխարհային ՀՆԱ-ից)		Գնաճ, միջին սպառողական գներ, տարեկան փոփոխություն, %	
	2020	2019	2019	2020
UAEmirates	0.4%	-1.9%		-2.1%
Malaysia	0.4%	0.7%		-1.1%
Thailand	0.6%	0.7%		-0.8%
Switzerland	0.9%	0.4%		-0.7%
Israel	0.5%	0.8%		-0.6%
Ireland	0.5%	0.9%		-0.5%
Spain	1.5%	0.7%		-0.3%
Singapore	0.4%	0.6%		-0.2%
Taiwan	0.8%	0.5%		-0.2%
Italy	2.2%	0.6%		-0.1%
Japan	6.0%	0.5%		0.0%
Hong Kong	0.4%	2.9%		0.3%
Denmark	0.4%	0.7%		0.3%
Germany	4.5%	1.4%		0.4%
Finland	0.3%	1.1%		0.4%
Belgium	0.6%	1.2%		0.4%
France	3.1%	1.3%		0.5%
Korea	1.9%	0.4%		0.5%
Sweden	0.6%	1.6%		0.7%
Canada	1.9%	1.9%		0.7%
UK	3.2%	1.8%		0.9%
Australia	1.6%	1.6%		0.9%
Netherlands	1.1%	2.7%		1.1%
Armenia*	0.0%	1.4%		1.2%
US	24.8%	1.8%		1.2%
Norway	0.4%	2.2%		1.3%
Austria	0.5%	1.5%		1.4%
Indonesia	1.3%	2.8%		2.0%
China	17.4%	2.9%		2.4%
Colombia	0.3%	3.5%		2.5%
Philippines	0.4%	2.5%		2.6%
Romania	0.3%	3.8%		2.6%
Azerbaijan*	0.1%	2.7%		2.8%
Chile	0.3%	2.3%		3.0%
Czechia	0.3%	2.8%		3.2%
Brazil	1.7%	3.7%		3.2%
Vietnam	0.4%	2.8%		3.2%
South Africa	0.4%	4.1%		3.3%
Russia	1.7%	4.5%		3.4%
Mexico	1.3%	3.6%		3.4%
Poland	0.7%	2.3%		3.4%
Saudi Arabia	0.8%	-2.1%		3.4%
Georgia*	0.0%	4.9%		5.2%
Bangladesh	0.4%	5.5%		5.6%
Egypt	0.4%	13.9%		5.7%
India	3.2%	4.8%		6.2%
Pakistan	0.3%	6.7%		10.7%
Turkey	0.9%	15.2%		12.3%
Nigeria	0.5%	11.4%		13.2%
Iran	0.8%	34.6%		36.5%
Argentina	0.5%	53.5%		42.0%
Total/Average**	94%	4.4%		3.7%

* Այս երկրները ներառվել են ոչ թե այն պատճառով, որ դրանք 50 խոշոր տնտեսությունների շարքում են, այլ դրանց նկատմամբ մեր հատուկ հետաքրքրության պատճառով

** Միջին արժեքը հաշվարկված է գնաճի համար

Եզրակացություն

Իրական գնաճի ամենակարևոր որոշիչներից մեկը գնաճային սպասումների կայունությունն է: Մենք չպետք է շփոթենք հարստության փոխանցումը մի արդյունաբերությունից մյուսը գնաճի ընդհանուր մակարդակի հետ: Նեղ խցանի և ճգմելու էֆեկտը հանգեցնում են գների կտրուկ բարձրացման, բայց դրանք գրեթե միշտ կրում են ժամանակավոր բնույթ:

Մեր զեկույցի հաջորդ մասում (3-րդ մաս) մենք կքննարկենք հարստության պահպանությունը և կանդրադառնանք մեր ընկերոջ հարցին, որը առաջացել է մեր զեկույցի 1-ին մասից և վերաբերում է նրա ժառանգությանը:

Երկրորդ մասի ավարտ

*Դավիթ Թամադյան
Հիմնադիր գործընկեր*

Դրույթներ և պայմաններ

© «Հայաստան 2041» Բարեգործական Հիմնադրամ

Բոլոր իրավունքները պաշտպանված են

«Հայաստան 2041» Բարեգործական Հիմնադրամը («Հիմնադրամ») հաշվետվության նկատմամբ ունի բացառիկ իրավունքներ:

Դուք չեք կարող փոփոխել, խմբագրել, պատճենել, վերարտադրել, հրապարակել, ստեղծել զեկույցի ածանցյալ աշխատանքներ: Ցանկացած չարտոնված վերարտադրություն կամ նյութի այլ օգտագործում կհամարվի Հիմնադրամի մտավոր սեփականության իրավունքի խախտում: Իր իրավունքների ոտնահարման դեմ Հիմնադրամը կարող է դիմել իրավական պաշտպանության միջոցների:

Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում պարունակվող տեղեկատվության ճշգրտության կամ ամբողջականության համար: Չեկույցը գործում է միայն զեկույցում նշված ամսաթվի դրությամբ:

Չեկույցը տրամադրվում է տեղեկատվական նպատակներով և չի պարունակում խորհրդատվություն որևէ հարցի վերաբերյալ: Հիմնադրամը չի երաշխավորում զեկույցում պարունակվող տեղեկատվության/վերլուծության ճշգրտությունը: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում գրված և/կամ սույն զեկույցում պարունակվող ցանկացած տեղեկություն/վերլուծություն օգտագործելու համար, և/կամ զեկույցում առկա ցանկացած սխալների կամ բացթողումների կամ անճշտությունների համար, ինչպես նաև զեկույցի հիման վրա իրականացված կամ չիրականացված գործողությունների համար: Դուք օգտագործում եք սույն զեկույցը ձեր իսկ սեփական ռիսկի ներքո:

Հիմնադրամի կայքից զեկույցը բացելիս կամ ներբեռնելիս, Հիմնադրամը չի երաշխավորում, որ ձեր համակարգիչը պաշտպանված կլինի համակարգչային վիրուսներից կամ վնասակար այլ ծրագրերից: